ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
31.12.2020թ.



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Ծնթ.	2020թ. Հազար դրամ	2019թ. Հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ			
Հիմնական միջոցներ	12	1,799	1,454
Ոչ նյութական ակտիվներ			
Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ			
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ			
Ընդամենը Ոչ Ընթացիկ ակտիվներ		1,799	1,454
ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ			
Պաշարներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	58,087	44,615
Տրամադրված կարճաժամկետ փոխառություն		450	
Ընթացիկ ակտիվներ հարկերի գծով			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	4,953	419
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		63,490	45,034
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**65,289**	**46,488**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Համալրված բաժնետիրական կապիտալ	15	50	50
Վերագնահատումից տարբերություններ		728	1,455
Չբաշխվածշահույթ(չծածկվածվնա)		28,680	16,889
Ընդամենը սեփական կապիտալ		29,458	18,394
ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Երկարաժամկետ ֆինանսական պարտավորություններ	16	9,323	
Ակտիվներին վերաբերող շնորհներ			
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		9,323	
ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**-**	**-**
Ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	16	-	-
Եկամուտներին վերաբերող շնորներ			
Ընթացիկ պահուստներ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17	26,508	28,094
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		26,508	28,094
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**35,831**	**28,094**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**65,289**	**46,488**

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

	Ծնթ.	2020թ. Հազար դրամ	2019թ. Հազար դրամ
Հասույթ	5	54,742	60,898
Վաճառքի ինքնարժեք	6	(22,858)	(22,485)
ՀԱՄԱԽԱՌՆ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ)		**31,884**	**38,413**
Գործառնական այլ եկամուտներ			
Վարչական ծախսեր	7	(15,425)	(17,765)
Իրացման ծախսեր	8	-	-
Գործառնական այլ ծախսեր		(280)	(381)
Ներդրումային եկամուտ			
Ֆինանսական ծախսեր	9	(417)	(160)
Այլ ոչ գործառնական շահույթ/(վնաս)	10	(746)	(49)
ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ(ՎՆԱՍ) ՆԱԽՔԱՆ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԸ		**15,016**	**20,058**
Շահութահարկի գծով ծախս(փոխհատուցում)	11	(3,225)	(3,896)
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ		**11,791**	**16,162**

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Վերագնահատումից տարբերություններ	Չբաշխված շահույթ (Չծածկ վածվնաս)	Ընդամենը
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**50**	**2,182**	**17,706**	**19,938**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-		16,162	16,162
Շահաբաժիներ			(17,706)	(17,706)
Հիմնական միջոցի վերագնահատում	-		-	-
Ներքին շարժեր	-	**(727)**	727	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**50**	**1,455**	**16,889**	**18,394**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-		11,791	11,791
Շահաբաժիներ			-	-
Հիմնական միջոցի վերագնահատում	-		-	-
Ներքին շարժեր	-	**(727)**	-	**(727)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**50**	**728**	**28,680**	**29,458**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

	2020թ. Հազար դրամ	2019թ. Հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	61,383	66,489
Այլ մուտքեր, այդ թվում	110	-
Ստացված տոկոսներ	-	-
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(20,532)	(14,340)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(12,993)	(10,292)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ, բացառությամբ շահութահարկի	(12,412)	(14,487)
Վճարված շահութահարկ	(4,535)	(4,077)
Այլ վճարումներ	(14,243)	(17,741)
Վճարված տոկոսներ	(417)	(140)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(3,639)	**5,552**
Ֆինանսական գործունեությունից մուտքեր		
Ստացված փոխառություններ		
Ստացված Վարկեր	9,699	
Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից	**9,699**	
Ֆինանսական գործունեությունից ելքեր		
Վճարված շահաբաժիններ		
Վճարված փոխառություններ	(450)	
Վճարված Վարկեր	(1,091)	(5,161)
Ընդամենը ելքեր ֆինասական գործունեությունից	**(1,541)**	**(5,161)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**4,519**	**391**
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**419**	**34**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**15**	**(6)**
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**4,953**	**419**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ Սահմանափակ պատասխանատվությամբ Ընկերություն:

Ընկերությունը գրացվել է Հայաստանի Հանրապետության գրանցման պետական ռեգիստրի կողմից 1997թ. մայիսի 25-ին, գրանցման համար՝ 278.050.02042, Ընկերության ՀՎՀՀ՝ 00419022:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, գրասենյակ 54:

2 ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ

Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

3. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք վերաչափվում են իրական արժեքով կանոնավոր հիմունքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (<<դրամ>>), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

(ե) Անընդհատություն

Ընկերությունն իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է անընդհատության հիմունքով:

Ղեկավարությունը գտնում է, որ ՖՀՄՍ-ները շարունակում են լինել կիրառելի, և չափման, ճանաչման և բացահայտման հետ կապված ՖՀՄՍ պահանջները պետք է պահպանվեն:

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

(ա) Իրական արժեքի որոշում

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Իրական արժեքները որոշվել են չափման և բացահայտման նպատակով՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված մեթոդները: Կիրառելիության դեպքում, իրական արժեքների որոշման ժամանակ կատարած

ենթադրությունների մասին լրացուցիչ տեղեկատվությունը բացահայտվում է ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրությունում:

(բ) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների իրական արժեքը հիմնականում որոշվում է կիրառելով մաշեցված փոխարինման արժեքը, բացառությամբ այն միավորների, որոնց համար առկա է համանման հիմնական միջոցների ակտիվ շուկա և որոնց իրական արժեքը հաշվարկվում է շուկայական արժեքի հիման վրա: Հիմնական միջոցների շուկայական արժեքն այն գնահատված գումարն է, որով հիմնական միջոցը գնահատման ամսաթվի դրությամբ կարող է փոխանակվել պատրաստակամ գնորդի և պատրաստական վաճառողի միջև՝ <<անկախ կողմերի միջև գործարքում>> համապատասխան շուկայավարում կատարելուց հետո, որտեղ կողմերը գործում են իրազեկորեն և առանց հարկադրության: Սարքավորումների, տնտեսական միջոցների իրական արժեքի հիմքում ընկած է շուկայական մոտեցումը՝ կիրառելով համանման միավորների համար գնանշվող շուկայական արժեքը՝ վերջինիս առկայության դեպքում:

Գնանշվող շուկայական արժեքի բացակայության դեպքում, հիմնական միջոցների իրական արժեքը հիմնականում որոշվում է կիրառելով մաշեցված փոխարինման արժեքը: Այս մեթոդը դիտարկում է հիմնական միջոցների վերարտադրման կամ փոխարինման ծախսերը՝ հաշվի առնելով ֆիզիկական, ֆունկցիոնալ կամ տնտեսական մաշվածությունը և հնացածությունը:

(գ) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը, բացառությամբ անավարտ աշխատանքի, գնահատվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեք: Իրական արժեքը որոշվում է բացահայտման նպատակների համար:

5. ՀԱՍՈՒՅԹ

Հազար դրամ	2020	2019
Հասույթ	54,742	**60,898**
Ընդամենը	**54,742**	**60,898**

6. ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

Հազար դրամ	2020	2019
Վաճառված ծառայությունների ինքնարժեք	(22,858)	(22,485)
Ընդամենը	**(22,858)**	**(22,485)**

7. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2020	2019
Հիմ.միջ.մաշվածության ծախսեր	(71)	(727)

Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	(160)	(1,942)
Վարձակալության գծով ծախսեր	(7.467)	(7.467)
Աուդիտորական և խարհուրդատվական ծախսեր	-	-
Վարչական այլ ծախսեր	(7.727)	(7.629)
Ընդամենը	**(15.425)**	**(17.765)**

8. ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	**2020**	**2019**
Ընդամենը		

9. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	**2020**	**2019**
Տոկոսային ծախսեր փոխառությունների և վարկերի գծով	(417)	(160)
Ընդամենը	**(417)**	**(160)**

10. ԱՅԼ ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹ/ՎՆԱՍ

Հազար դրամ	**2020**	**2019**
Շահույթ/Վնաս փոխարժեքային տարբերություններից	(746)	(49)
Ընդամենը	**(746)**	**(49)**

11. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ (ԾԱԽՍ)/ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ	**2020**	**2019**
Ընթացիկ հարկի գծով ծախս	(3,225)	(3,896)
Ընդամենը	**(3,225)**	**(3,896)**

Ընկերությունը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառվող 20% դրույքով (2018թ-ին նույնպես՝ 20%):

12. ՀԻՄՆԱԿԱՆՄԻՋՈՑՆԵՐ

	Արտադրական և տնտեսականգույք
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**3,636**
Ավելացումներ	
Օտարումներ	
Փոխանցումներ	
Վերագնահատում	
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**3,636**

Ավելացումներ	**1,143**
Օտարումներ	
Փոխանցումներ	
Վերագնահատում	
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**4,779**
Մաշվածություն	
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**1,454**
Տարվա մաշվածություն	727
Օտարումներ	
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**2,182**
Տարվա մաշվածություն	798
Օտարումներ	
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**2,980**
Հաշվեկշռային արժեք	
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**1,454**
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,799**

13. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	**2020**	**2019**
Տրված Կանխավճարներ	914	3,417
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	-	517
Այլ դեբիտորական պարտքեր	57,173	40,681
Ընդամենը	58,087	44,615

14. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Հազար դրամ	**2020**	**2019**
Կանխիկը դրամարկղում	110	3
Բանկային հաշիվների մնացորդներ	4,843	416
Ընդամենը	4,953	419

15. ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

Հազար դրամ	**2020**	**2019**
Բաժնետիրական կապիտալ	50	50
Պահուստներ		
Ընդամենը	50	50

ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

Ընկերությունն իրավունք ունի տարեկան մեկ անգամ իրականացնել իր շահույթի բաշխում ընկերության մասնակիցների միջև: Շահույթի բաշխման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից:

ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

Համաձայն Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունների մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի Ընկերությունը կարող է ստեղծել պահուստային և այլ ֆոնդեր՝ իր կանոնադրությամբ

նախատեսված կարգով և չափերով: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չբաշխված շահույթի մնացորդով:

ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՀՈՒՍՏ

Վերագնահատման պահուստը վերաբերում է հիմնական միջոցների վերագնահատմանը: Ընկերությունը հաշվետու տարում հիմնական միջոցների վերագնահատում չի կատարել:

16. ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Ընկերության ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին:

Հազար դրամ	2020	2019
Ընթացիկ պարտավորություններ		
Կարճաժամկետ վարկեր	9,353	-
Երկարաժամկետ վարկեր		
Ընդամենը		-

17. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2020	2019
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,507	6,918
Այլ կրեդիտորական պարտքեր	23,001	21,178
Ընդամենը	26,508	28,094

Ընկերության ենթարկվածությունն արտարժույթի և իրացվելիության ռիսկերին առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 18-ում:

18. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկում է հետևյալ ռիսկերին.

- վարկային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Ընկերության ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Ընկերության նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումներ:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Տնօրենների խորհրդին իր գործունեության վերաբերյալ:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն ու կընկալեն իրենց դերը և պարտականությունները:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Ընկերության նկատմամբ: Վարկային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացվելիք դեբիտորական պարտքերի և կապակցված կողմերին տրված վարկերի գծով:

Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Վարկային գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանաչափը գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար՝ բացառությամբ կապակցված կողմերի:

Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Վարկային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև հաճախորդների բազայի կառուցվածքը, ներառյալ տվյալ ոլորտի հաճախորդի ու երկրի կողմից հանձն առնված պարտականության չկատարման ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ վարկային ռիսկի վրա:

Կապակցված կողմերին տրված վարկեր

Համաձայն Ընկերության քաղաքականության վարկերը կարող են տրամադրվել միայն կապակցված կողմերին: Ընկերությունը հաշվետու տարում կապակցված կողմերին տրամադրած վարկեր չունի:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն՝ բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն Ընկերության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և փոխառությունների հետ: Ընկերությունը հաշվետու տարում ունի արտարժույթով արտահայտված կարճաճամկետ վարկ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածության չափը որոշող քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկեր կամ փոխառություններ տրամադրելիս կամ վերցնելիս ղեկավարությունը կհիմնվի իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելը:

Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարումը կարգավորող ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Ընկերության գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու, ինչպես նաև շուկային մասնակիցների վստահությունը պահպանելու համար: Դա կարելի է իրագործել դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության հասույթի և շահույթի շարունակական վերահսկման, հիմնականում Ընկերության գործառնական գործունեության դրամական միջոցների հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի իրականացման, ինչպես նաև վարկերի ու փոխառությունների միջոցով:Ձեռնարկելով վերը նշված քայլերը՝ Ընկերությունը նպատակ ունի ապահովել շահույթի ստացումը ընթացիկ տարում:

19. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

Ընկերությունը բավարարում է ՀՀ կառավարության պահանջները կապված շրջակա միջավայրի հետ և չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունն ամբողջությամբ վերահսկվում է ղեկավարության կողմից:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և

ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրություն իր հիմնական միջոցների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով,որոնք հաճախ հստակչեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարքմարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթեխախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել Ընկերության համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները: